Ապատեղեկատվություն պատվաստանյութերի մասին

Այսօրվա թվային դարաշրջանում տեղեկատվությունը արագ է տարածվում: Դժբախտաբար, ապատեղեկատվությունը՝ նույնպես: Պատվաստանյութերի մասին թյուրիմացությունները կարող են սկսվել պարզ բամբասանքից, թյուր պատկերացումներից կամ նույնիսկ կեղծ տեղեկությունների նպատակային տարածումից:

Այս ապատեղեկատվությունը կարող է առաջացնել վախ և շփոթ, և որոշ դեպքերում այն հանգեցնում է այն հիվանդությունների բռնկմանը, որոնք մենք վերահսկում էինք, օրինակ՝ կարմրուկի: Եկեք խոսենք փաստերով՝ կոտրելով պատվաստանյութերի մասին տարածված որոշ կեղծ համոզմունքներ:

ԿԵՂԾԻՔ: Պատվաստանյութերն առաջացնում են աուտիզմ

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Չկա գիտական ապացույց, որ պատվաստանյութերն առաջացնում են աուտիզմ: Այս կեղծ համոզմունքը առաջ է եկել 1998թ.-ին հրապարակված մի թերի ուսումնասիրությունից, որը հետագայում հանվեց լուրջ սխալների և էթիկայի խնդիրների պատճառով: Դրանից հետո բազմաթիվ լայնածավալ ուսումնասիրություններ, որոնք ընդգրկում էին միլիոնավոր երեխաների, գտել են, որ կապ չկա պատվաստանյութերի և աուտիզմի միջև:

ԿԵՂԾԻՔ: Բնական անվարակունակությունն (իմունիտետ) ավելի լավ է, քան պատվաստանյութի տված անվարակունակությունը

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Հիվանդություն ձեռք բերելը երբեմն կարող է Ձեզ անվարակունակությամբ ապահովել, սակայն դա կայուն չէ և կարող է առաջացնել լուրջ առողջական վտանգներ: Օրինակ՝ ջրծաղիկով հիվանդանալը կարող է Ձեզ անվարակունակ դարձնել ամբողջ կյանքում, բայց այն կարող է առաջացնել նաև լուրջ բարդություններ, ինչպիսիք են մաշկային վարակները կամ թոքաբորբը: Հակառակ դրան, պատվաստանյութերն առաջացնում են նմանատիպ պաշտպանվածություն՝ առանց լուրջ հիվանդություններ ձեռք բերելու վտանգի:

ԿԵՂԾԻՔ: Պատվաստանյութերը պարունակում են վտանգավոր բաղադրիչներ

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Պատվաստանյութերը պարունակում են բաղադրիչներ, որոնք անհրաժեշտ են դրանց արդյունավետությունը և անվտանգությունը պահպանելու համար: Որոշ բաղադրիչներ, ինչպիսիք են ֆորմալդեհիդը և սնդիկը, կարող են սարսափելի թվալ: Սակայն ֆորմալդեհիդի քանակը պատվաստանյութում շատ փոքր է. իրականում այն զգալիորեն ավելի փոքր է այն քանակից, որը Ձեր մարմինը բնականորեն արտադրում է ամեն օր: Պատվաստանյութերի մեծ մասը չունի սնդիկ և թիոմերսալ՝ սնդիկի մի տեսակ, որը հեռացվել է մանկական բոլոր պատվաստանյութերից 2001 թվականին: Երբ այն օգտագործվում է, սնդիկը օգնում է կանխել բակտերիաների և սնկերի աճը մի քանի դեղաչափից բաղկացած պատվաստանյութերում: Բացի այդ, անվտանգության համար պատվաստանյութերը շարունակաբար փորձարկվում և վերահսկվում են գիտնականների և առողջապահության ոլորտի մասնագետների կողմից:

County of Los Angeles Public Health

Ապատեղեկատվություն պատվաստանյութերի մասին

ԿԵՂԾԻՔ: Պատվաստանյութերը կարող են Ձեզ տալ այն հիվանդությունը, որի կանխարգելման համար ստեղծվել են

Իրականություն: Պատվաստանյութերի մեծ մասը պարունակում է վիրուսի կամ բակտերիայի կտորներ, որոնք չեն կարող Ձեզ հիվանդացնել: Որոշ պատվաստանյութեր ունեն թուլացած կամ «կենդանի» վիրուսներ, բայց դրանք չափազանց թույլ են իրական հիվանդություն առաջացնելու համար: Փոխարենը դրանք սովորեցնում են Ձեր իմունային համակարգին, թե ինչպես դիմադրել իրականին, եթե այն երբևէ հայտնվի:

ԿԵՂԾԻՔ: Պատվաստանյութերը թուլացնում են Ձեր իմունային համակարգը

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Սովորաբար պատվաստանյութերը վարժեցնում են Ձեր իմունային համակարգին լինել ավելի ուժեղ: Վիրուսի կամ բակտերիայի անվնաս տարբերակի հետ ծանոթանալով՝ Ձեր իմունային համակարգը սովորում է պաշտպանվել դրանից: Այդպիսով, եթե Դուք երբևէ իրականին հանդիպում եք, Ձեր մարմինն իմանում է ինչ անել:

ԿԵՂԾԻՔ: Ես պատվաստման կարիք չունեմ , քանի որ խմբային անվարակունակությունը կպաշտպանի ինձ

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Խմբային անվարակունակությունը գործում է, միայն երբ մարդկանց ճնշող մեծամասնությունը պատվաստվում է՝ պաշտպանելով նրանց, որոնք չեն կարող պատվաստվել, ինչպես օրինակ՝ նորածիններին և որոշակի առողջական խնդիրներ ունեցող մարդկանց: Եթե չափից ավելի շատ մարդ է ընտրում չպատվաստվելը, խմբային անվարակունակությունը ձախողվում է՝ վտանգ առաջացնելով բոլորի համար, ներառյալ՝ ամենախոցելիների:

ԿԵՂԾԻՔ: Պատվաստանյութերն ունեն միկրոչիպեր, որոնք հետևում են մարդկանց

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Պատվաստանյութերում բացարձակապես չկա որևէ միկրոչիպ կամ մարդկանց հետևող որևէ սարք: Հնարավոր է, որ սա առաջացած լինի թյուրընբռնումից՝ կապված առողջության թվային գրանցումների հետ, որոնք հիվանդի բժշկական տվյալների էլեկտրոնային տարբերակներն են, որոնք պահում են բժշկական ծառայությունների մատակարարները, և բոլորովին կապ չունեն անհատներին հետևելու հետ:

ԿԵՂԾԻՔ: Դուք կարիք չունեք պատվաստվելու այն հիվանդությունների դեմ, որոն մենք արդեն հաղթահարել ենք

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Թեև որոշ հիվանդություններ այժմ հազվադեպ են պատահում պատվաստանյութերի շնորհիվ, դրանք ամբողջությամբ չեն անհետացել: Եթե մենք դադարեցնենք պատվաստումները, ապա այս հիվանդությունները կարող են վերադառնալ և՝ արագ: Ահա թե ինչու հիվանդությունները հեռու պահելու և մեր համայնքները պաշտպանելու համար մենք դեռ պատվաստանյութերի կարիք ունենք: